— Գնա՛յ տուն, բախտաւոր, գեղեցիկ Մարօն կբժշկէ քեզ...

Ի. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ՀՈՂ

Արեւը նոր սկսեց ծագել:

Հասօն տաղաւարում չէր. տղերքը գնալուց յետոյ ես մենակ մնացի այնտեղ: Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Գնամ տուն, հին բարեկամիս տունը, այնտեղ «Մարօն կբժշկէ ինձ»: Չէ՛, չեմ գնայ, Մարօն թող չտեսնէ, որ իմ առողջութիւնը վատ է, նա փափուկ սիրտ ունի, նա լաց կլինի.... Չէ՛, գնամ մի փոքր ման գալու, գուցէ վաղորդեան օդը կը կազդուրէր ինձ:

Առաւօտեան ցօղը դեռ չէր բարձրացել խոտերից, եւ արեգակի առաջին ճառագայթները խաղալով մարգարտեայ կաթիլների հետ, արտափայլում էին ծիածանի գոյներով: Օդը տոգորուած փափուկ խոնաւութեամբ, հովացնում էր իմ բորբոքուած երեսը: Հեռաւոր լեռները դեռ պատած էին ճերմակ ու թափանցիկ մշուշով:

Իմ թուլացած անդամները բաւականին զուարթացան վաղորդեան հովութիւնից, բայց տակաւին սիրտս խռովութեան մէջ էր: Ես գնում էի լուռ եւ մտախոհ կերպով. ո՞ւր էի գնում, ինքս չէի իմանում, միայն մի բան ինձ քաշում էր հեռու մարդկային բնակութիւնից: Գիշերոայ երազն ամենեւին դուրս չէր գալիս իմ մտքից. նոյն զարհուրելի տեսարանները ներկայացնում էին իմ երեւակայութեան մէջ: Ի՞նչ էր նշանակում այն սարսափելի հեղեղատը: Ի՞նչ էր նշանակում պղտոր ալիքների այնպէս փրփրելով, գոռալով կատաղի հոսանքը, որ տանում էր իր հետ այնքան անբախտ զոհեր, որոնց թւում գտնւում էին եւ այն անձինքը, որոնք այնքան մօտ եւ սիրելի էին իմ սրտին...: Վերջապէս ի՞նչ էր նանակում Սոնայի եւ Մարօի իմ օգնութեանը հասնելը. միթէ՞ նրանց ձեռքումն էր իմ փրկութիւնը, միթէ՞ նրանք կարողացան ազատել ինձ: — Ոչ, մինչեւ նրանց հասնելը ես արդէն ջրի խորքումն էի, այն սառը եւ թաց գերեզմանի մէջ թաղուած...

Միթէ՞ մեր կեանքը մի այսպիսի երազ չէր... միթէ՞ մեզ եւս իր հետ չէր տանում աշխարհային հոսանքը իր կատաղի ալեկոծութեան մէջ...

Ես գնում էի մի հովտի միջով, ուր մշակուած դաշտերը խոստանում էին առատ հունձք. մի տեղ դեռ նոր էին վարում հողը, մի տեղ ցանում էին, միւս տեղ արածացնում էին ոչխարների հոտերը, մի խօսքով, որ կողմ եւ նայում էի, եփ էր գալիս աշխատութիւն, ամէն ինչ շարժողութեան մէջ էր, ամէն տեղ երեւում էր կեանք եւ գործունէութիւն: Այո՛, «ծոյլ չէ այդ ժողովուրդը...», յիշեցի Կարօյի խօսքերը, եւ մի այդպիսի ժողովուրդը անբա՛խտ է...